## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2014 թ. N 529-Ն

ք. Ստեփանակերտ

# ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 221 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 7-րդ հոդվածի 10-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է***.

1. Սահմանել ընդերքի մասին երկրաբանական տեղեկության անկախ փորձաքննության իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 26-ի «Ընդերքի մասին երկրաբանական և այլ տեղեկատվության անկախ փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 221 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ**
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ** **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության

2014 թվականի օգոստոսի 5-ի
N 529-Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են ընդերքի մասին երկրաբանական տեղեկության անկախ փորձաքննության իրականացման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգով նախատեսված անկախ փորձաքննության իրականացման նպատակն է ընդերքօգտագործողին տրամադրված երկրաբանական և այլ տեղեկության արժանահավատության ճշտումը, եթե փոխվել են ընդերքի տեղամասի կառուցվածքի, կազմի, քանակի, դրանում օգտակար հանածոների առկայության և այլ հատկությունների, ինչպես նաև ընդերքի օգտագործման տեխնիկատնտեսական ցուցանիշների մասին տվյալները և մոտեցումները:

3. Ընդերքի մասին երկրաբանական տեղեկության անկախ փորձաքննություն կարող են իրականացնել համապատասխան որակավորում ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձինք, այդ թվում՝ միջազգային փորձագետները:

4. Անկախ փորձաքննությունն իրականացվում է ընդերքօգտագործողի նախաձեռնությամբ՝ սեփական միջոցների հաշվին, և փորձաքննության ենթակա հարցերի շրջանակը սահմանում է ընդերքօգտագործողը:

5. Անկախ փորձագետի ընտրությունը կատարվում է ընդերքօգտագործողի կողմից:

6. Անկախ փորձաքննության ենթակա են ընդերքի տեղամասի մասին հետևյալ երկրաբանական տեղեկությունները՝

1) տարածաշրջանային երկրաբանական ուսումնասիրության նյութերը.

2) օգտակար հանածոների հանքավայրերի որոնմանը, հետախուզմանը և գնահատմանը վերաբերող նյութերը.

3) շահագործվող ու շահագործման նախապատրաստվող հանքավայրերի լրահետախուզմանը և շահագործական հետախուզմանը վերաբերող նյութերը.

4) հանքավայրի կոնդիցիաների վերագնահատման, վերահիմնավորման ու օգտակար հանածոյի պաշարների ճշտման, ինչպես նաև արդյունաբերական նշանակությունը կորցրած կամ հետագա աշխատանքների արդյունքում չհավաստված պաշարների դուրսգրման և ընդերքօգտագործման պայմանագրում ու նախագծում համապատասխան փոփոխությունները:

7. Եթե անկախ փորձաքննության արդյունքներով էապես փոխվում են հանքավայրի երկրաբանատնտեսագիտական գնահատականը, ընդերքի տեղամասի երկրաբանական կառուցվածքի և այլ հատկությունների վերաբերյալ պատկերացումները կամ պարզվում է, որ առկա է շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության մասին տեղեկատվության անհամապատասխանություն, ապա ընդերքօգտագործողն անկախ փորձագետի եզրակացությունը և նրա կողմից փորձաքննության ենթարկված նյութերը կարող է ներկայացնել լիազոր մարմին:

8. Անկախ փորձաքննության արդյունքների և լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողին տրված երկրաբանական տեղեկության անհամապատասխանության դեպքում, ինչպես նաև անկախ փորձաքննության արդյունքների արժանահավատությունն ստուգելու համար լիազոր մարմինը մեկամսյա ժամկետում ընդունում է որոշում անկախ փորձագետի եզրակացությունը և փորձաքննության ենթարկված նյութերն ընդերքաբանական փորձաքննության ենթարկելու վերաբերյալ՝ դրա մասին օրենքով սահմանված կարգով տեղեկացնելով ընդերքօգտագործողին:

9. Լիազոր մարմինը ներկայացված նյութերն ընդերքաբանական փորձաքննության է ենթարկում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

10. Անկախ փորձաքննության արդյունքների և լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողին տրված երկրաբանական տեղեկության համապատասխանության դեպքում ընդերքօգտագործողի՝ լիազոր մարմին ներկայացրած անկախ փորձագետի եզրակացությունը և անկախ փորձաքննության ենթարկած նյութերն ընդերքաբանական փորձաքննության չեն ենթարկվում, և նախկինում կատարված ընդերքաբանական փորձաքննության արդյունքները մնում են անփոփոխ:

11. Նախկինում կատարված ընդերքաբանական փորձաքննության արդյունքները մնում են անփոփոխ, եթե անկախ փորձաքննության արդյունքները լիազոր մարմնի կողմից իրականացված ընդերքաբանական փորձաքննության ընթացքում չեն հավաստվում:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ** **Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**